ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆԻ ՋՆԱՐԱԿԱԾ ԽԵՑԵՂԵՆԸ

Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Անդրկովկասում ջնարակած անոթները հանդես են գալիս մ. թ. ա. IX դարից հետո (թեև ջնարակած ուլունքներ հայտնի են դեռևս միջին բրոնզի շրջանից)։ Հայաստանում IX—VII դդ. անոթներ են հայտնաբերվել Այգևանից, երեք ոտքով փոքրիկ թաս և երկու փոքրիկ անոթ՝ Օշականից[1], Կարմիր բլուրից, Մեծամորից[2], Լճաշենից[3], Ստեփանավանի և Կիրովականի դամբարաններից։ Այդ անոթները ներմուծված են Ասորեստանից[4]։

Այդևանի թասը և անոթը պատրաստված են դարշնագույն, կարմրավուն, թուխ կավերից, ավազի մեծ պարունակությամբ, այսինքն նույն կավից, ինչ որ հասարակ խեցեղենը։ Մեկի կապտականաչավուն ջնարակը շատ ծակոտկեն է, մյուսինը՝ ապակու հատիկներով, որը ցածր ջերմաստիճանի տակ հալելու արդյունք է։ Թասի պսակին վրձինով քսված կարմիր ջնարակով արված են եռանկյունաձև զարդեր, իսկ մյուսի վրա՝ առանձին շերտեր։

Ընդհանրապես մ. թ. ա. IX—VI դդ. անոթների ջնարակները ցածրորակ են, մակերեսները անհարթ ու շատ բարակ և հավանաբար պատրաստվել են Հայաստանում։ Օրինակ, Մեծամորում հայտնաբերված արտադրական խոտանի հետքերը, ապակուց և մածուկից պատրաստված ուլունքները, ջնարակած բազալտի և ուլունքների գյուտերը ենթադրել են տալիս, որ դրանք արտադրվել են տեղում։ Սպեկտրալ անալիզը ցույց է տալիս, որ ինչպես ջնարակի, այնպես էլ ապակու և մածուկի դույնը պայմանավորված է պղնձի խառնուրդով։ Ապակու և ջնարակի համար գլխավոր ելանյութ է ծառայել կվարցը[5]։

Վրաստանում և Ադրբեջանում այդ շրջանի ջնարակած խեցեղեն համեմատաբար ավելի քիչ է հայտնաբերվել։ Վրաստանում ջնարակած անոթներ են գտնվել Թրիալեթիից[6], Սամթավրոյից և այլ վայրերից[7], անոթների մի մասն ունի ուղղահայաց կապտականաչավուն և դեղնավուն շերտեր, ծածկված անգույն, թափանցիկ ջնարակով։ Ադրբեջանում ջնարակած խեցեղեն հայտնաբերվել է Խոջալիի դամբարանթմբերից (գտնվել է աստուրական արձանագրու-

---

1 *Ա. Ա. Քալանթարյանի և Ս. Ա. Եսայանի պեղումներից։*

2 *Է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Վ. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973, էջ 71, 73։*

3 *Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 145, նկ. 77։*

4 Г. Караханян, В. Мирзоян, Древние захоронения с поливной керамикой, *ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1976, № 11, էջ 71—73։*

5 *«Մեծամոր», էջ 71—73։*

6 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, т. I, Тбилиси, 1941, *էջ 52, աղ. XX։*

7 Н. Ф. Мамайашвили, Производство и потребление фаянса в средневековой Грузии, автореферат канд. дисс., Тбилиси, 1970, *էջ 5։*

թյամբ արկղիկ և ուլունք, որոնք ներմուծված են Ասորեստանից), Մինգեչաուրից, Խանլարի շրջանից[8] (կապտականաչավուն ջնարակով)։

Առաջավոր Ասիան, այդ թվում նաև Ասորեստանը, ջնարակած խեցեղենի արտադրության կարևոր կենտրոն էր և Անդրկովկասում հայտնաբերված ջնարակած խեցեղենի մի մասը ներմուծվել է այդ երկրներից, իսկ մյուս մասը պատրաստվել է տեղում։ Ուրարտական պետությունը, որը զարգացած արհեստագործության եռկիր էր, սերտ կապերի մեջ էր հարևան Ասորեստանի և մյուս առաջավոր ասիական երկրների հետ։ Ուստի հավանաբար փորձեր են արվել տեղում կազմակերպելու նոր տիպի խեցանոթների արտադրություն։ Այդ են վկայում Մնծամորի պեղումները, ինչպես նաև Հայաստանի տարբեր վայրերից հայտնաբերված ջնարակած խեցեղենը, որն իր զուգահեռներն ունի հասարակ խեցեղենի մեջ։ Տեղական արտադրությունը կրել է սահմանափակ բնույթ։

Հայաստանում մ. թ. ա. V—II դդ. հուշարձաններում ջնարակած առարկաների գյուտերը պատահական բնույթ են կրում, իսկ մ. թ. ա. I—մ. թ. III դդ. ջնարակած խեցեղենի արտադրությունը տարածում է ստանում։ Վրաստանում[9] և Ադրբեջանում մ. թ. ա. V—I դդ. հուշարձաններում ջնարակած խեցեղեն չի հանդիպում։ Այն երևան է գալիս միայն մ. թ. I դարում, ըստ որում ոչ մեծ քանակությամբ։

Հայաստանում մ. թ. ա. I—մ. թ. III դդ. ջնարակած խեցեղեն հայտնաբերվել է Արմավիրից[10], Արտաշատից, Գառնիից, Սիսիանից և այլ վայրերից։ Դրանք տարբեր չափերի ափսեներ են, սափորներ, պուլիկներ, ամֆորաներ, տափաշշեր, երկկանթանի անոթներ և այլն։ Շատ կարևոր են հատկապես Արտաշատից հայտնաբերված, հստակ շերտագրական պատկեր ունեցող ջնարակած խեցեղենի նմուշները, որոնք օգնում են թվագրելու նաև մյուս հուշարձանների նյութերը։

Ջնարակած խեցեղենի մեջ հետաքրքրության արժանի են տարբեր չափերի ու գույների տափաշշերը։ Դրանք շրջանաձև են, մեծ մասամբ երկու կողմից սեղմված կողերով, որոնք միանում են իրար ժապավենաձև հարթ կամ ներճկված մասով, որի վերին մասում, վզի մոտ հանդչում են տափակ, փոքր կանթերը։ Երկու կողերն ու վիզը պատրաստված են առանձին-առանձին և հետո միացված են։ Հայտնի բոլոր տափաշշերը, բացառությամբ մեկի, դեղնավուն կավից են։ Ուշագրավ է Արտաշատի բլրից գտնված տափաշիշը (աղ. I, 2, աղ. V, 4), որը չափերով ամենամեծն է, շուրթը թերի է (պահպանված մասի բարձր. 24 սմ է)։ Նրա երկու կողմերի միացման ժապավենաձև մասը (լայն. 6 սմ) հարդարված է սանրով արված ակոսավոր հորիզոնական գծիկներով, իսկ ուռուցիկ մասերը՝ համակենտրոն շրջաններով։ Մակերեսը ծածկված է երկնագույն ջնարակով, որը տեղ-տեղ թափվել է։ Ջնարակը ծակոտկեն է, անհավասար հաստությամբ քսված, որոշ տեղերում գունդ-գունդ եղած։

Երկնագույն ջնարակով պատած փոքր տափաշշեր են գտնվել Արտաշատի VII բլրից, Արմավիրից (աղ. I, 1), Սիսիանից (աղ. I, 4, 5, աղ. V, 1, 5, բարձր.

---

8 Б. А. Куфтин, Материалы к археологии Колхиды, т. I, Тбилиси, 1949, էջ 52։ К. Х. Кушнарева, Археологические работы 1954 г. в окрестностях сел. Ходжалы, «Материалы и исследования по археологии СССР», № 67, М.—Л., 1959, էջ 383—385։

9 Н. Ф. Мамаиашвили, Նշվ. աշխ., էջ 5—6։

10 Ղ. Ա. Տիրացյան, Արմավիրի պեղումները, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (Հաս. գիտ.), 1973, № 2, էջ 40, № 5, էջ 100—101, 1974, № 12, էջ 62—63։



Աղյուսակ I



Աղյուսակ II

14,7 սմ, պս. տրամ. 3.4 սմ)։ Վերջիններիս ժապավենաձև մասերը ներճկված են։ Սիսիանի տափաշշերից մեկը (աղ. I, 4, աղ. V, 1, բարձր. 14,4 սմ, պս. տրամ. 4 սմ) պատած է կանաչավուն ջնարակով, որն անհավասար է քսած, նրա մի կողմն ավելի ուռուցիկ է, իսկ մակերեսը հարդարված է ակոսավոր համակենտրոն շրջաններով։ Հայաստանում հայտնաբերված կապտականաչավուն ջնարակով պատած մի տափաշիշ էլ պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում (ՊՊԹ, 723, աղ. I, 3, աղ. V, 3, բարձր. 10 սմ, պս. տրամ. 2,2 սմ)։ Վերջինիս մի կողմը նույնպես քիչ ուռուցիկ է։

Ամենահետաքրքիրը Արտաշատի IV բլրի վրա հայտնաբերված տափաշշի բեկորներն են, որոնք ուռուցիկ պատերի մասեր են։ Դարշնագույն, տեղական կավից պատրաստված տափաշշի բեկորների մոխրագույն ջնարակի ֆոնի վրա կապտականաչավուն գույնով արված են շրջանաձև զարդեր։

Ինչպես գունազարդ, այնպես էլ ջնարակած տափաշշեր հայտնի են Առաջավոր Ասիայի շատ հնավայրերից։ Ջնարակած տափաշշեր են գտնվել Բաբելոնից[11], Աշուրից[12], Նիմրուդից[13], Տիգրիսի ափի Սելևկիայից[14], Դուրա-Էվրոպոսից[15], Շուշից[16] և այլ վայրերից[17]։ Դրանք տարբեր չափերի են (բարձրությունը 5,8 սմ մինչև 29 սմ), կողերը երկու կողմից սեղմված են, կամ մի կողմն ավելի ուռուցիկ է։ Հարդարված են անվաձև զարդերով, համակենտրոն շրջաններով, թմբիկներով և այլն։ Նրանց կողերի միացման տեղը ամբողջ շրջագծով մեկ ներճկված է կամ հարթ։ Նշված բոլոր տափաշշերը վերաբերում են պարթևական շրջանին։

Հայաստանում գտնված անոթները, բացի Արտաշատի գունավոր տափաշշից, իրենց ջնարակի գույնով և հատկապես կողերի միացման մասի ներճկվածությամբ (հատկանիշներ, որոնք չունեն տեղական հասարակ տափաշշերը) նման են վերոհիշյալ առաջավորասիական կենտրոնների տափաշշերին։ Դրանք ներմուծվել են այդ կենտրոններից որևէ մեկից, շատ հավանական է Տիգրիսի ափի Սելևկիայից, որտեղից հայտնաբերված տափաշշերի հետ մեր օրինակների նմանությունն ավելի ցայտուն է։ Դրանք վերաբերում են մ. թ. ա. I դարին։

Ուշադրության արժանի է մուգ դեղնադարշնագույնին մոտեցող, սև ու սպիտակ ավազախառնուրդով մանրահատիկ կավից պատրաստված, Արտաշատից գտնված անոթի իրանի վերին մասի բեկորը (աղ. II, 10)։ Նրա իրանի մասում կան ուղղահայաց առևակոսներ։ Մակերեսը դրսից պատած է կանաչավուն հաստ ջնարակով, իսկ ներսից՝ ավելի բարակ թաղանթով։ Անոթն ամբողջությամբ ծածկված է արծաթագույն իռիզացիայով (հարավ-արևելյան դամբարանադաշտ, դամբ. № 34)։ Նման մի բեկոր գտնվել է Արտաշատի արևելյան դամբարանադաշտից. պատրաստված է բաց դեղնավուն կավից, դրսից պատած է կապտականաչավուն (փիրուզագույն), ներսից՝ երկնագույն ջնարակով (№ 14)։ Վերոհիշյալ բեկորների ինչ տեսակ անոթի պատկանելը որոշելուն օգնում է Արմավիրում 1970 թ. գտնված կանթարոսը (աղ. II, 9)։ Այն առևակոսներով զարդարված իրան ունի, դեղեցիկ ձևավորված ոտք, դուրս լայնացող

---

[11] H. Klengel, Babylon zu zeit der Perser, Griechen und Parther Forschungen und Berichte, B. 5, Berlin, 1962, նկ. 8։

[12] W. Andrae und H. Lenzen, Die Partherstadt Assur, Leipzig, 1933, աղ. 47, 1) 20678a.

[13] David and Joan Oates, Nimrud 1957: The Hellenistic settlement, Iraq, vol. XX, Part 2, 1958, աղ. XXVI, 6։

[14] N. C. Debevoise, Parthian pottery from Seleucia on the Tigris. Michigan, 1934, № 298—305.

[15] N. Toll, The Green Glazed pottery, The Excavations at Dura-Europos, Final Report IV, Part I, Fasc. I, London, 1943, աղ. XVII, նկ. 25, № 1, 2։

[16] M. Dieulafoy, L'acropole de Suse, Part IV, Paris, 1892, նկ. 267։

[17] Eva Strommenger, Gefasse aus Uruk von der Neubabylonischen zeit Bis zu den Sasaniden, Berlin, 1967, աղ. 55, 4; Catalogue of Iranian Art Expedition, Tokyo, 1971, № 112.

պսակ, տափակ կանթերը երկայնքով ներճկված են, պսակին ամրացված մասում կանթերը երկու կողքերից ելուստներ ունեն։ Արմավիրի անոթը պատրաստված է բաց դեղնավուն, անգույնի հասնող ավազախառնուրդով կավից[18]։

Արմավիրում գտնվել է առևակոսներով անոթի մի այլ բեկոր ևս, դարչնագույն ավազախառնուրդով դեղնավուն կավից պատրաստված, երկնագույն ջնարակով պատած։

Այս անոթներն արտաքին ձևով ու հարդարանքով մետաղյա անոթների ընդօրինակություն են։ Սրանց անմիջական զուգահեռները տակավին մեզ հայտնի չեն։ Սակայն երկկանթանի և ընդհանրապես առևակոսներով զարդարված խեցեղեն անոթներ հանդիպում են սկսած մ. թ. ա. I հազարամյակի սկզբից։ Ուրարտական երկկանթանի, առևակոսներով հարդարված իրանով կավե անոթ է հայտնաբերվել Արմավիրից։ Մ. թ. ա. VI—II դդ. մետաղե և կավե սափորներ գտնվել են Իրանում, Փոքր Ասիայում և Ադրբեջանում։ Արմավիրից և Արտաշատից հայտնաբերվել են նաև ուշ հելլենիստական շրջանի, առևակոսներով հասարակ անոթների բեկորներ. հարդարման այդ ձևը շարունակվել է նաև մ. թ. I—III դդ.։ Արմավիրի և Արտաշատի երկկանթանի անոթները հիշեցնում են նաև կանթերին ելուստներ ունեցող ուրարտական և աքեմենյան սափորները։ Դրանք շերտագրական և հարակից նյութերով թվագրվում են մ. թ. ա. I դարով։ Թեև սիրիա-միջագետքյան ջնարակած խեցեղենի մեջ վերոհիշյալ կանթարոսների զուգահեռները մեզ հայտնի չեն, սակայն Արմավիրի և Արտաշատի անոթներից մեկը ներմուծված է, հավանաբար, Տիգրիսի ափի Սելևկիայից, իսկ Արտաշատի տեղական կավից պատրաստված կանթարոսը ընդօրինակված է ներմուծված օրինակներից։

Ուշադրության արժանի են Արտաշատի VIII բլրից գտնված երկկանթանի լայնաբերան անոթները։ Դրանցից առաջինի իրանն է պահպանվել (աղ. II, 4, աղ. V, 2), օղակաձև ոտքով և ոլորուն կանթերի հիմքերով, երկրորդի՝ իրանի ուռուցիկ մասը՝ մեկ կանթով, որը վերից վար ներճկված է (աղ. II, 1)։ Հավանաբար նույն տիպի անոթի է պատկանում նաև Արտաշատի դամբարանադաշտից գտնված ջնարակած անոթի ներքին մասը, որի օղակաձև ոտքն իր հղկվածությամբ, մշակված անկյունավոր ձևերով կատարելության է հասցված (աղ. II, 2)։ Այս երկկանթանի սափորները պատրաստված են դուրգի վրա, դեղնավուն միասեռ կավից, նուրբ բարձրորակ կապտականաչավուն ջնարակով երկու անգամ պատվել են դրսից, իսկ բարակ շերտով՝ ներսից, խեցու ամրությունն ու անթափանցիկությունն ապահովելու համար։ Կարմիր անգոբով պատած նման սափոր, ոլորուն կանթերով, հայտնի է բլուրներից արևմուտք գտնվող դամբարանադաշտից։ Երկկանթանի, ջնարակած նույնատեսակ անոթներ շատ են հայտնաբերվել Դուրա-Էվրոպոսի դամբարաններից[19] (որոնց մի մասը տարբերվում է ուսերին եղած փորագիր զարդերով), Ուռուկից[20] (որոնք ունեն համեմատաբար ցածր իրան և լայն հատակ)։ Մ. թ. I դարին պատկանող այդպիսի միկանթանի սափոր, կարմիր լաքով պատած, գտնվել է Պանտիկապեյոնի № 54 գերեզմանից[21]։ Արտաշատի VIII բլրի անոթները գտնվել են մ. թ.

---

18 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1972, № 2, էջ 40։

19 N. Toll, նշվ. աշխ., աղ. I, նկ. 4, 7, աղ. III, նկ. 6։

20 E. Strommenger, նշվ. աշխ., աղ. 25,9, 28,6։

21 Н. З. Кунина, Н. П. Сорокина, Стеклянные бальзамарии Боспора, «Труды Гос. эрмитажа», XIII, Л., 1972, էջ 160, նկ. 6, 62։

I—II դդ. շերտերից։ Կարելի է ասել, որ նույն ժամանակին է պատկանում նաև դամբարանադաշտից գտնված սափորը։ Այդ թվագրության օգտին են խոսում նաև վերը բերված զուգահեռները։ Այս իրերը, հավանաբար, ներմուծվել են միջագետքյան կենտրոններից մեկից (շատ հնարավոր է՝ Դուրա-Էվրոպոսից), որտեղ այդ շրջանում գոյություն ուներ ջնարակած խեցեղենի մասսայական արտադրություն։

Հաջորդը միկանթանի սափորի վերին մասի բեկոր է (աղ. II, 12)։ Սափորը, հավանաբար, եղել է տանձաձև, պատրաստված է դուրգի վրա, կաթնագույն կավից, մակերևույթը պատած է փիրուզագույն հաստ ջնարակով, որը հոսել է մինչև անոթի ներսը։ Այս անոթը աղերսվում է Դուրա-Էվրոպոսից գտնված ջնարակած սափորի[22] հետ։ III—IV դդ. ձգված տանձաձև իրանով հասարակ սափորներ հայտնաբերվել են Գառնիից, Վերին Գետաշենից (ՊՊԹ 2000/2), Մինգեչաուրից[23], Ուրբնիսիից[24], Մցխեթից[25] (ջնարակած, մ. թ. II դար), Տիգրիսի ափի Սելևկիայից[26] և այլ վայրերից, սակայն Արտաշատի ջնարակած սափորը ավելի ուռուցիկ իրան ունի և հանդիսանում է վերոհիշյալ տանձաձև սափորների նախատիպը. պատկանում է I—II դդ.։ Հախճապակու տիպի կավի գույնից և վարպետությամբ կատարված ջնարակից դատելով կարելի է ենթադրել, որ այն նույնպես ներմուծված է Դուրա-Էվրոպոսից։

Կարասային թաղումից հայտնաբերված փոքրիկ անոթը (վերին մասը չի պահպանվել) նույնպես պատրաստված է դուրգի վրա դեղնավուն կավից և ունի թանձր պատ (աղ. II, 13)։ Իրանը տանձաձև է, մակերեսը պատած է կանաչավուն բարակ ջնարակով (պահպանված մասի բարձր. 6 սմ, հատ. տրամ. 4,4 սմ), հավանաբար կիրառվել է իբրև օծանելիքի անոթ։ Ճիշտ այդպիսի փոքր չափերի ջնարակած և հասարակ միկանթանի անոթներ հայտնաբերվել են Դուրա-Էվրոպոսից[27]։ Արտաշատի փոքր անոթը հավանաբար Դուրա-Էվրոպոսից է ներմուծվել։ Այն գտնվել է սուր նստուկով կարասի մեջ և պատկանում է մ. թ. I—II դդ.։

Ուշադրության արժանի են Արտաշատի դամբարանադաշտից գտնված, ցցուն ոտքով փոքր անոթների ներքին մասերը (աղ. III, 11, 12), որոնք պատրաստված են ձեռքով, սև ու սպիտակ ավազախառնուրդով դարչնագույն կավից։ Սրանցից առաջինը քիչ մեծ է երկրորդից, երկու կողմից պատած է փիրուզագույն ջնարակով, որը անորակ լինելու և ցածր ջերմաստիճանի տակ հալելու պատճառով խիստ անհարթ է ու ծակոտկեն։ Ըստ պահպանված մասի (բարձր. 3,5 սմ, հատ. տրամ. 6 սմ) այն պետք է լինի շատ տարածված, ձգված իրանով, ալաբաստրոնաձև սրվակի մաս։ Նույնպիսի, բայց ավելի փոքր սրվակի ներքին մաս է նաև մյուս բեկորը (պահպանված մասի բարձր. 3 սմ, հատ. տրամ. 3,8 սմ)։ Անոթի մակերեսը թաց վիճակում պատել են թույլ կանաչավուն ջնարակի բարակ շերտով։

---

22 N. Toll, նշվ. աշխ., աղ. VII, նկ. 24, № 1։

23 Р. М. Вандов, Мингечаур в III—VIII вв., Баку, 1961, աղ. VI; С. М. Казиев, Альбом кувшинных погребений Мингечаура, Баку, 1960, էջ 117, աղ. I, 1։

24 Л. А. Чилашвили, Городище Урбниси, Тбилиси, 1964, նկ. 30, III։

25 «Мцхета». I, Тбилиси, 1958, էջ 117, աղ. I, 1։

26 N. C. Debevoise, նշվ. աշխ., նկ. 345։

27 N. Toll, նշվ. աշխ., աղ. XVII, նկ. 24, № 2։



Աղյուսակ III



Աղյուսակ IV

Այս անոթները, որ հավանաբար օգտագործվել են իբրև օծանելիքի ու հոտավետ յուղերի սրվակներ, ջնարակած խեցեղենի տարածված տեսակներից են։ Այդ ձևի անոթներ շատ են հայտնաբերվել Վրաստանից[28] և Ադրբեջանից[29]։ Նրանք վերաբերում են մ. թ. I—III դդ. ու մեծ մասամբ պատած են փիրուզագույն ջնարակով, կոպիտ են պատրաստված և համարվում են եգիպտական ու հունական նույնանման անոթների ընդօրինակություն։ Այդպիսիք

---

28 Б. А. Куфтин, Археологические раскопки в Грналети, *աղ. 20*; М. П. Синауридзе, Погребения позднеантичного и раннефеодального времени из Когото. «Вестник» Гос. музея Грузии, XXVII-В, Тбилиси, 1967, *էջ 114, աղ. II, 3*։

29 Т. П. Голубкина, М. М. Расулова, О связях древних кавказских албанцев со странами древнего мира, «Ученые записки» Аз. Гос. университета, 1967, № 3, *էջ 82—85, աղ. II, 1, 2, 4, 5*։

գտնվել են նաև Տիգրիսի ափի Սելևկիայից[30], Դուրա-Էվրոպոսից[31], Ուրուկից[32] և այլ վայրերից։ Այդ տիպի անոթները, հանդես գալով մ. թ. I դարում, իրենց գոյությունը պահպանում են նաև հետագայում։ III—IV դդ. մեծ քանակությամբ այդպիսի սրվակներ են գտնվել հյուսիսային Միջագետքից[33] (Թել Մահուզ)։ Արտաշատի սրվակները զուգահեռ նյութերով թվագրվում են մ. թ. I—II դդ.։

Ուշադրության արժանի են ափսեների բեկորները։ Դրանցից մեկը պատրաստված է մուգ դեղնավուն կավից և պատած է բաց կանաչավուն հարթ ջնարակով։ Կրակի մեջ ընկնելու պատճառով նրա կավը սևացել է, իսկ ջնարակը ծակոտկեն է դարձել։ Այն ափսեի վերին մասի բեկոր է, դրսից անցումը իրանից դեպի պսակը եռանկյունաձև է, իսկ ներսից՝ ուղղահայաց (աղ. III, 6)։ Ըստ երևույթին նույնպիսի ափսեի շուրթ է նաև երկրորդ բեկորը, որի պսակը քիչ կլորավուն է (աղ. III, 8), պատրաստված է բաց դարչնագույն տեղական կավից, մակերեսը պատած է փիրուզագույն ջնարակով, որի շաղախը ցածր ջերմաստիճանի տակ հալելու պատճառով առաջացել են խոշոր պղպջակներ և մակերեսն անհարթ է։ Երրորդ բեկորը գտնվել է VII բլրի վրա բացված դամբարանից, պատրաստված է դեղնավուն մանրահատիկ կավից և պատած է դեղնականաչավուն ջնարակով (աղ. III, 7)։

Այս տիպի հասարակ ափսեները, ինչպես վերը նշեցինք, շատ տարածված են եղել և Հայաստանում մեծ քանակությամբ հանդիպում են ուշ հելլենիստական շրջանի և մ. թ. I—II դդ. շերտերից։ Նշված ափսեների զուգահեռները մենք ունենք նաև Արտաշատի I և VII բլուրներից (աղ. III, 1, 2, 3, 9)։ Առաջավորասիական կենտրոնների ջնարակած խեցեղենի մեջ ափսեների այդպիսի ձևեր մեզ հայտնի չեն։ Արտաշատի VIII բլրի ափսեի բեկորը գտնվել է մ. թ. ա. I դարի դամբարանից։ Այդ ժամանակով թվագրվող շերտից են հայտնաբերվել նաև I բլրի բեկորները։ Հատկապես հետաքրքիր է դեղնավուն մանրահատիկ կավից պատրաստված, մուգ կանաչավուն հաստ ջնարակով պատած ափսեի մասը (աղ. III, 4)։ Նրա պսակի վրա, համաչափ հեռավորությամբ, ջնարակած թմբիկներ են արված։ Ներսում, բացի այդպիսի թմբիկներից, արված են նաև մուգ շագանակագույն կետեր ու շերտեր։ Նման ձևերով վարպետը ավելի հետաքրքիր ու հաճելի է դարձրել անոթի մակերեսը։ Վերոհիշյալ ափսեների խումբը կարող է պատկանել մ. թ. ա. I դարին և ամենայն հավանականությամբ պատրաստված է տեղում։

Բեկորներից վերջինը ձկան ափսեի ներքին մաս է (աղ. III, 14), օղակաձև ոտքով, ներսից, հատակին, ուռուցիկ շրջանի մեջ առնված բնորոշ ակոսով, որից 5 սմ վեր կա փորագիր երկրորդ շրջանը (պահպանված մասի բարձր. 3 սմ, հատ. տրամ. 12 սմ)։ Անոթը պատրաստված է դուրգի վրա, բաց դարչնագույն, ավազախառնուրդով տեղական կավից։ Մակերեսը պատած է փիրուզագույն ջնարակով, որը տեղ-տեղ թափվել է։ Շաղախը ցածր ջերմաստիճանի տակ է հալված, ուստի մակերեսը անհարթ է։

---

30 N. C. Debevoise, նշվ. աշխ., նկ. 167։

31 N. Toll, նշվ. աշխ., աղ. XVI, նկ. 23, № 1, 6, աղ. XVIII, նկ. 24, № 1։

32 E. Strommenger, նշվ. աշխ., աղ. 28, 2։

33 R. V. Ricciardi, Sasanian pottery from Tell Mahuz (North Mesopotamia), Mesopotamia, V—VI, Torino, 1970, 1971, էջ 427—439, 449—453, նկ. 92, № 19—[illegible]։

Ձկան ափսեի վերին մասի մի բեկոր, ներքև կախված բնորոշ պսակով, հայտնի է VIII բլրից, գտնվել է մեծ խորությունից, մ. թ. I դարի խեցեղենի հետ (աղ. III, 13)։ Վերջինս նույնպես պատրաստված է դուրգի վրա, կարմրավունին տվող դարչնագույն տեղական կավից, մակերեսը պատած է կապտավուն, հավասար քսած չնարակով, որը հալված է համապատասխան բարձր



Աղյուսակ V

ջերմաստիճանի տակ։ Այլ վայրերից չնարակած ձկան ափսեներ դեռևս մեզ հայտնի չեն։

Ձկան ափսեները հելլենիստական շրջանում մուտք են գործում Հայաստան և մինչև մ. թ. III դարը լայնորեն օգտագործվում էին կենցաղում։ Արտաշատի չնարակած ձկան ափսեների կավը տեղական է և հավանաբար դրանք պատրաստված են հենց Արտաշատում։ Թվագրվում են մ. թ. I—II դդ.։

Այս խմբին կարելի է միացնել նաև քրեղանի վերին մասի բեկորը, դուրս ու ներս քիչ լայնացող հորիզոնական կտրած պսակով, քիչ ներճկված վզով (աղ. III, 10)։ Պատրաստված է դեղնավուն կավից, պատած է լավ պահպանված մուգ կանաչ հաստ չնարակով։ Շրթի վրա կա կավի և չնարակի կաթիլ, որը մի քանի անոթներ միաժամանակ թրծելու հետևանք է և ոչ թե արտադրական խոտան[34] և հաճախ է հանդիպում ինչպես ներմուծված, այնպես էլ տեղա-

[34] Ф. Н. Тер-Мартиросов. Античные печи из раскопок Арташата, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1975, № 7, էջ 81։ Ինչ վերաբերում է եռոտանիներին (աղ. II, 2), որոնք իրր ծառայել են չնարակած խեցեղեն թրծելու համար, ապա դրանցից առա-

կան ջնարակած խեցեղենի վրա։ Այս քրեղանի զուգահեռները նույնպես մենք ունենք միայն տեղական անջնարակ խեցեղենի մեջ։ Ամանը հիշեցնում է նաև 1973 թ. VII բլրից գտնված ջնարակած քրեղանի բեկորը (աղ. III, 5), այն տարբերությամբ, որ վերջինիս պսակն ավելի շատ է դեպի դուրս լայնանում։ Արտաշատի ջնարակած քրեղանները ևս պետք է համարել տեղական արտադրանք և թվագրել մ. թ. I—II դդ.։

Ափսեների և քրեղանների մասեր են դարչնագույն և մուգ դեղնավուն, սև ավազախառնուրդով կավից պատրաստված, օղակաձև ոտքով հատակները (աղ. IV, 2—7), որոնց մակերեսը ծածկված է բաց կանաչավուն, կապտականաչավուն, կանաչավուն, երկնագույն և կաթնավուն ջնարակով։ Դրանցից մի քանիսը ներսից ունեն հատակն ընդգծող, զույգ ակոսավոր շրջան։ Այդօրինակ հատակները բնորոշ են Արտաշատի մ. թ. ա. II դարի վերջի—մ. թ. II դարի անջնարակ խեցեղենի համար։ Նման ակոսավոր զարդերով ջնարակած հատակներ նույնպես շատ են հայտնաբերվել Արտաշատի բլուրների մ. թ. ա. I—մ. թ. II դդ. շերտերից։

Հավանաբար, նման ոտք է ունեցել նաև Արմավիրից[35] հայտնաբերված ցածր եզրերով ափսեն (գտնված է վերին կեսը), որը ներսից ունի փորագիր զույգ շրջան, պատրաստված է դեղնավուն, սև ավազախառնուրդով կավից և պատած է կապտականաչավուն ջնարակով (աղ. IV, 1)։

Արտաշատի ափսեների և քրեղանների վերը նկարագրված հատակները վերաբերում են մ. թ. ա. I—մ. թ. II դդ.։ Ամենայն հավանականությամբ, Արմավիրի ափսեն, որն իր զուգահեռներն ունի մ. թ. ա. I դարի և մ. թ. I դարի անջնարակ ափսեների մեջ, ներմուծված է Արտաշատից և պատկանում է մ. թ. ա. I դարի երկրորդ կեսին։

Ուշագրավ են թասերի բեկորները, որոնք նույնպես դեղնավուն կավից են, պատրաստված են դուրգի վրա և ծածկված են փիրուզագույն ջնարակով։ Դրանցից մեկի իրանը ուղղահայաց առևակոսներով է հարդարված, իսկ մյուսի պսակն անջատված է թեթև ներճկումով։ Երկուսն էլ հիշեցնում են մ. թ. I—II դդ. տեղական հասարակ թասերը (աղ. IV, 8, 9)։

Արտաշատի դամբարաններից մենք ունենք նաև դարչնագույն և մուգ դարչնագույն կավից պատրաստված ջնարակած մի շարք բեկորներ, որոնք դժվար է ասել թե ինչ տեսակ անոթների են պատկանել։ Դրանցից ուշագրավ է դարչնագույն կավից նրբախեցի մի անոթի բեկորը, որի մակերեսին, կաթնագույն-մոխրագույն ջնարակի վրայից տարված է շագանակագույն ջնարակի գոտի։

Վերոհիշյալ անոթների քննությունը ցույց է տալիս, որ ջնարակած խեցեղենը Հայաստանում մ. թ. ա. I—մ. թ. II դդ. լայն տարածում էր ստացել։ Այն իր ձևերով, հարդարանքով ու ջնարակով կապվում է ջնարակած խեցեղենի արևելյան խմբի հետ։ Նրա մի մասը ներմուծված է Միջագետքյան և Միջերկրականի արևելյան ափերին գտնվող կենտրոններից, որտեղ նույնպես բոլոր պայմանները կային ջնարակած խեցեղենի արտադրության զարգացման համար։

ջինը նոոտանի չէ և ոչ մի կապ չունի ջնարակած խեցեղենի հետ, իսկ երկրորդի վրա ջնարակի հետք չկա, ուստի տվյալ դեպքում այն նույնպես չի կապվում ջնարակած խեցեղենի հետ։ Այդպիսի նոոտանիներն օգտագործվում էին ընդհանրապես խեցեղեն անոթներ թրծելու համար։

35 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 12, էջ 62—63, նկ. 3գ։

Դժբախտաբար արհեստագործության այդ կարևոր ճյուղը վատ է ուսումնասիրված, ուստի մենք հնարավորություն չունենք ավելի որոշակի խոսելու ջնարակած խեցեղեն արտադրող իրանական կենտրոնների ու նրանց կապերի մասին։

Ուսումնասիրությունից պարզվում է, որ Արտաշատից գտնված ջնարակած խեցեղենը հիմնականում կրկնում է տեղական անջնարակ անոթների ձևերը։ Նրա մեծ մասը, հասարակ խեցեղենի նման, պատրաստված է տեղական գարշնագույն և դեղնավուն, ավազախառնուրդով կավից։ Հասարակ խեցեղենի մեջ էլ են հանդիպում բաց գարշնագույն և դեղնավուն կավերից պատրաստված անոթներ, ինչպես, օրինակ, Արտաշատի № 31 դամբարանից գտնված գունազարդ անոթը, որը կաթնագույն կավից է։ Արտաշատի շրջակայքում այդ կավատեսակները այսօր էլ կան և օգտագործվում են (Արտաշատի շրջանի Յուվա գյուղի կավը դարշնագույն է և դեղնավուն, թրծված վիճակում այն շատ նման է Արտաշատի անտիկ շրջանի խեցեղենի կավերին)։ Ինչ վերաբերում է ջնարակին, ապա Սովետական Հայաստանի մի շարք վայրերում, ինչպես, օրինակ, Էլարում, Այգեհատում, Արարատի շրջանում կան կվարցիտի հարուստ հանքավայրեր, որոնք իրենց քիմիական կազմով, որպես հումք, միանգամայն պիտանի են ապակի ստանալու համար։ Արարատի կվարցիտի հանքավայրերը գտնվում են Արտաշատի շրջանում, Արարատի երկաթուղային կայարանից 1,5—2 կմ հարավ-արևմուտք։ Այստեղի կվարցիտների հանքանյութը հեշտությամբ է ենթարկվում տաքացման ու մշակման։ Քիմիական անալիզը ցույց է տալիս, որ այն հանդիսանում է բնական բովախառնուրդ և լրացուցիչ խառնուրդներ չի պահանջում[36]։ Եվ, վերջապես, հումք կամ կիսաֆաբրիկատ կարելի էր բերել նաև Հայաստանի ավելի հեռավոր վայրերից։ Այնուհետև, ապակու վերը նշված բոլոր գույները, և հատկապես կաթնագույնը, փիրուզագույնը, կանաչը, կապույտը, դեղնավունը և նրանց տարբեր երանգները հելլենիստական շրջանի և մ. թ. I—III դդ. տեղական ապակու բնորոշ գույներից են։ Ջնայած առաջավորասիական կենտրոնների ջնարակած խեցեղենին որոշ չափով հատուկ են գունավոր զարդերը, սակայն Արտաշատի ջնարակած խեցեղենի գունավոր զարդերը խիստ բնորոշ են տեղական գունազարդ խեցեղենին։ Այդ տեսակետից շատ հետաքրքիր են հատկապես Արտաշատի բլուրից հայտնաբերված ջնարակած շրջանաձև զարդերով տափաշշի բեկորները։

Հայաստանի ջնարակած խեցեղենը միշտ չէ, որ բարձրորակ է։ Այն զիջում է առաջավորասիական կենտրոնների արտադրանքին։ Տեղական ջնարակած խեցեղենի կավը հաճախ մաքուր չէ, ոչ շատ բաց գույնի, ջնարակի շերտը բավարար հաստություն չունի, շաղախը մաքուր չէ և ցածր ջերմաստիճանի տակ է հալված։ Ուստի մակերեսը հարթ չէ, հաճախ ծակոտկեն, իսկ փակ անոթների ներսը երբեմն ջնարակած չի լինում։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ուշ հելլենիստական շրջանում և մ. թ. I—III դդ. Հայաստանն ուներ ջնարակած խեցեղենի արտադրություն։ Ամենայն հավանականությամբ այն (ապակյա սրվակների արտադրության նման) սպասարկել է տեղական շուկան և մրցել ներմուծված ջնարակած անոթների հետ։ Հայաստանի ջնարակած խեցեղենի արտադրության կարևոր կենտրոններից

36 «Геология Армянской ССР, т. VII, Неметаллические полезные ископаемые», Ереван, 1966, էջ 209—210, 213—214, 338—342։

մեկը եղել է Արտաշատը, որը բավարարել է և՛ սեփական շուկայի պահանջարկը, և՛ արտահանել հարևան շրջաններ։ Հնարավոր է, որ Արմավիրի, Գառնիի և մյուս հնավայրերի ջնարակած խեցեղենի մի մասը բերվել է Արտաշատից։

Ջնարակած խեցեղենի արտադրությունը, ապակեգործության նման, մ. թ. IV դարից սկսած վայրէջք է ապրում։ Այն կենցաղում իր հաստատուն տեղն է գրավում միայն VIII դարից հետո, երբ ջնարակած խեցեղենը կրկին վերելք ապրեց և հասավ իր ծաղկմանը։

Պետք է հուսալ, որ Հայաստանի անտիկ շրջանի հուշարձանների հետագա պեղումները նոր նյութեր կհայթայթեն ջնարակած խեցեղենի ուսումնասիրության հետ կապված հարցերի լուսաբանման համար։

АНТИЧНАЯ ПОЛИВНАЯ КЕРАМИКА АРМЕНИИ

Ж. Д. ХАЧАТРЯН

(Резюме)

Во время раскопок последних лет в античных памятниках Армении найдены образцы поливной керамики, изучение которых показывает, что в I в. до н. э.—II в. н. э. поливная керамика имела здесь широкое распространение. В этот период Армения была одним из центров ее производства. Часть найденных глазурованных сосудов была привезена в Армению из центров Междуречья и с восточных берегов Средиземного моря, но более значительная их часть повторяет формы и украшения местной простой керамики и по своим особенностям связана с восточной группой поливной керамики. Одним из важнейших центров производства поливной керамики Армении был город Арташат, продукция которого не только удовлетворяла внутренние потребности, но и вывозилась в соседние районы.